

COUTAN: REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS
(SOUS LE PATRONAGE DE M. E. DUCLAUX)

ԳՈՒԹԱՆ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ


Հ Ա Ն Գ Է Ս

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ Տ

1901

Փ Ա Ր Ի Ձ



Արի՛. գաթան. զա՛րի գուժան,
որն եկել է ճաշ դառել:
Առ շուք տուր, խոփիտ շուրթան
ժրհնեալ է Աստուած հորովէ՛լ:
Իաշիք էգո, աւիտ ճառագ,
Իաշի՛ք, բաշե՛ք. զաբ անե՛ք
Ճգտին արա՛, բշիք հօտալ,
Ե՛կր սեւ սրին ճար անե՛ք:

ՅՈՂ. ԹՈՒՄԱՆՆՈՆ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ - Տ Ն Յ Ր Է Ն

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Մ Ե Ծ Ա Տ ՈՒ Ի Ե Ա Ն

Secrétaire: PAUL GÉRÉE

Directeur: K. MÉOZADOURIAN,

Rédaction: 23, Rue de la Collégiale, PARIS (5^e)



Վ. ՎԵՐՄՕՐԷԼ

Վիլլֆրանշ (Րոն) Ֆրանսա

1900ի Ցուցահանդեսին Երկու մեծ մրցանակ

Էֆֆեկտի Թիւ 1 ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼ

ՄԵՍ ԱՇԽԱՏՈՎՓԵՆԱՆ ԵՒ ՔԱՇՈՂ



ՊԱՐ ԶՈՒՓԻՒՆ, ՏՈԿՈՒՆՈՒՓԻՒՆ

Մ Ղ Ե Ղ Ա Կ Ն Ե Ր

Ուղեցէք տեղեկութիւն

Կարկուտի դէմ ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼՆԵՐ

Էֆֆեկտի վայրկենական Պուլյին Միլտիուի եւ Պլաքրոզի դէմ:

Երաշխաւորութիւն ազդեցութեան, դիւրաւ գործածուելուն եւ խնայողութեան. 12 լիվարի համար մէկ ծրարը 1 ֆր. 75 : 24 ծրարը 42 ֆր.

Գրել

V. VERMOREL

Villefranche (Rhône)

France

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԵԱՆ

ՄԿՐՏԻՉ Ա.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ

«ԳՈՒԹԱՆ»Ի ՇԻՄՆԱԴՐԻՆ

(ԿՆԻՔ)

ՄԿՐՏԻՉ ծառայ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ և անհասանելի կամօքն ԱՍՏՈՒԾՈՅ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրապետին Պատրիարք Համադգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ ԷՋՄԻԱՄՆԻ. Մեծապատիւ Պ. Գարեգնի Գ. Մեծատուրեան, Տնօրէն «Գութան» ամսօրեայ հանդիսի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս, նուիրեմք ողջոյն Տիրաւանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Ի բազում ամաց և ժամանակէ հետէ գիտեմք և ճանաչեմք զՔիզ, որ սիրողդ էիր արդար վաստակոյ նահապետականի, օրհնելոյն յԱստուծոյ, այն է գեղեցիկ և անխարդախ արուեստի երկրագործութեան, գիտնականապէս և մասնագիտաբար ուսանելով և ուսումնասիրելով ի մանկական և յուսանողական տիոցդ և ուրախ եմք յոյժ՝ յորժամ

տեսանեմք այսօր ղցանկալին այն վաստակդ, ի լոյս ընծայեալ յօգուտ եւ ի զարգացումն հայրենեացդ եւ ազգայնոցդ, Գոյին սուղ միջոցովք, այն է հրատարակելով հանդէս մի ամսօրեայ ընդ անուամբս «Գուլթան»:

Գիտե՞ս, եթէ որքան ուրախ եղեւ սիրտ Մեր ի տես առաջին թուոյ ամսագրոյդ, օգտակար՝ եւ պիտանի յօգուածովք լցեալ, յօգուածք՝ որք քան զամենայն հեղինակութիւնս քաղցր եւ հաճոյ թուեցաւ. յայս Մեր, որ սիրողս եմք երկրագործութեան, սիրող եւ զայն մշակող քրտնաթոր գիւղական ժողովուրդն:

Օրհնեա՛լ Դու եւ վաստակ Գո. օրհնեա՛լ՝ որք հովանաւորեն եւ սատար հանդիսանան հրատարակութեանց Գոց եւ ամսագրոյդ:

Արդ՝ յակն արկեալ Մեր ընդ ազգօգուտ գործդ եւ հրատարակութիւնդ, որպէս եւ ընդ անձնանուէր զոհողութիւնսդ, Մեք սովին Հայրապետական կոնդակաւ յայտնելով զգոհունակութիւն սրտի Մերոյ, հայցեմք յԱմենասուրբ Հոգւոյն զորավիզ Գեղ լինել ի խմբագրական ասպարիզիդ առատագեղ շնորհօքն իւրովք: Ընդ օրհնութեանս եւ գոհունակութեանս հրաւէր կարդամք առ գրասէր եւ գիւղասէր մեծատունս եւ մեկենասս Մեր ազգի, օժանդակ Գոյդ համակրելի նպատակաց հանդիսանալ, ի յառաջ վարել զառաջագրեալ եւ սկզբնաւորեալ հանդէսդ:

Ողորմութիւն Ամենակարող Փրկչին ընդ երկնային վարձատրութեան ընդ այնոսիկ, որք աշխատակիցք են Գեղ, սատարողք եւ հովանաւորողք ցարդ եւ յետ այսու:

Ողջ եւ յաջող լինել Գեղ ցանկամք ընդ յամայր ամս կատարեալն յառաջդիմութեամբ եւ մնամք հանապազ աղօթարար վասն աշխատաւորաց եւ երախտաւորաց սիրեցեալ ազգիս:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ի 21 Նոյեմբերի 1901 ամի

եւ ըստ Տոմարիս ՌԾԾԱ

Ի Հայրապետութեան մերում Թ. ամի

Սարատսեան Մայր Աթոռ Ս. Էջլիսձնի

Ի ՎԱՂԱՐԵԱՊՈՍ Թ. 1361

ԳԻՒՂԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Գիւղացիին բարեկեցութեան եւ բարոյակունին վրայ հո-
ղասիրութեան ազդեցութիւնը. — Եւրոպական քաղաքակրթու-
թեան յեղաշրջման եւ քաղաքական բարեշրջման զանազան
ձեւնարկները իրենց բարիքները ունեցան, որոնցմէ մաս-
նաւորապէս զիւղացին հողատէր ըլլալու իրաւունքը ու
պէտքը կրցաւ սորվիլ: Հողատիրութեան հետ սկսաւ ար-
ծարձիլ նաեւ զիւրակեցութեան զգացումը, եւ ախրապե-
տելու իրաւունքին ապահոված նիւթական յառաջադիմու-
թեամբը օր մը իր դաստիարակութեան եւ իր յատուկ կա-
տարելագործութեան տեսակէտով հոգեկան ճշմարիտ պէտքը
հասկնալու ճամբուն մէջ գտնուեցաւ:

Արդարեւ ընկերական անտեսագիտութեան մէջ հողա-
տիրութեան չափ զիւղացիներուն առողջապահութեան հետ
ամենասերտ յարաբերութիւններ ունեցող խնդիր մը չկայ:

Ամեն տեղ՝ ուր հողը քիչ բաժանուած է, զիւղացիները
յեղյեղուկ կամ միջին վիճակ մը ունենալով, երկրագործա-
կան բարենորոգումներով քիչ կը մտազրադին եւ ազքա-
տութեան ու բարուց խանգարման մէջ խաւարի պէս կ'ապրին:

Մեծ հողատէրներու երկրին՝ Անգլիոյ մէջ, երկիրը
ագարակատէրներու կամ վարձակալներու ձեռքին մէջ է,
որ հողը շահագործելով, գործաւորներուն կրթութեանը եւ
բարեկեցութեանը բնաւ հոգ չեն տանիր: «Եւ որ աւելին
է, կ'ըսէ Փրէտէրիք Բասի, վերջիները (մշակները) բաւա-
կան կը վճարեն, որպէսզի աղիւսաց օրհեկին սակ չիշնան:
(Բուր Լաու, Անգլիոյ մէջ այս օրէնքը կայ, որուն համե-
մատ ամեն հպատակ իր ուրիշ տուրքերէն զատ, պարտի
վճարել նաեւ ազքատներու համար պարտաւորիչ կերպով
գանձուած տուրք մը):

Անգլիոյ եւ Կալլէսի երկիրներուն մէջ 972,836 կալ-
ուածատէրներ կան, որոնց 703,289ը մէկ ակրօնէ նուազ
տեղ գրաւած են եւ 248,130ը մէկ ակրօն եւ անկէ վեր:
(Մէկ ակրօնը 40, 5 կալ է, եւ մէկ կալը 100 քառակուսի
մէթր): 100 ամենամեծ կալուածատէրերու ստացուածքը
միասին 3,852,000 կալ մակերեսով տեղ մը կը բռնէ
(1876ի անգլիական վիճակագրութիւն):

Սկովտիոյ եւ Իռլանտայի մէջ հողատիրութիւնը Անգլիայէ աւելի քիչ բաժանուած է: Ամեն ոք գիտէ թէ՛ այս վերջին երկրին մէջ գիւղական ժողովրդին խեղճութիւնը եւ թշուառութիւնը ո՞րչափ մեծ է, եւ հողային խնդիրը հետզհետէ ի՞նչ քաղաքական կարեւորութիւն ստացած է:

Եւրոպիոյ եւ մասնաւորապէս Հունգարիոյ, Մօրավիայի, Պոհեմիայի, նոյնպէս Պարսկաստանի մէջ՝ ուր ազնուականներուն եւ խաներուն հողերը մեծ տեղ մը կը բռնեն, գիւղացիներուն մէջ աղքատութիւնը շատ մեծ ծաւալ ըստացած է:

Հարաւային Իտալիոյ մէջ՝ ուր հողատիրութիւնը աւանդական դրութիւնը կը յիշեցնէ, գիւղացին կամ քաղաքակրթական անբարոյականացուցիչ եւ ծանրալուծ աշխատութեամբ մը ապրելու զատապարտուած է: «Թշուառութիւնը կալապրէի գիւղացիին ձեռքերուն մէջ զէնքեր կը դնէ, կ'ըսէ էլիզէ Ռէքլիւս, զայն աւագակութենէ շատ աւելի գործողութեան մը կը մղէ — իր հարազատ զաւակները դերեկանառելու...»:

Գեղջուկին՝ իր հողէն ուղղակի շահ չունենալը, այն հողին վատթարացումը եւ հետեւաբար վատառողջութիւնը յառաջ կը բերէ. այս պատճառով է, որ խել մը գիւղեր անշէն եւ վատառողջ դարձած են:

Արդեօք հոս տեղը չէ՞ կրկնել Բլինի խօսքերը. «Մեծ կապուածատէրները Իտալիան փճայուցին»:

Քնդհակադաս կը յայտարարենք որ հողատիրութիւնը բաժնուած է, երկրագործութիւնը գիւղացիներուն համար բարգաւաճման եւ բարոյացման աղբիւր մը դարցած է:

Մեր գիւղացիները մեծ մասամբ իրենց սեփական հողերը ունին, քիչեր կան որ ւնարապաներ են, այսինքն ագարակատէրներու կամ հողատէրներու պատկանող հողերու մէջ կ'աշխատին. բայց բնաւ չենք կրնար ուրանալ, որ ասոնց վիճակը, սեփական հողատէր եզրայրակիցներուն բազմամասմբ շատ ախուր եւ խղճալի է: Մեր ւնարապաներու կեանքը շահնէկան վիպի մը առատ նիւթ կը մատակարարէ, որուն վրայ կ'արժէ առանձինն գրել:

Ընդհանրապէս մեր գիւղացիներուն թշուառութեանց գլխաւոր պատճառները բազմապիմի են. ազիտութիւնը, դարուս յառաջգիմական շարժումներուն անտարբեր զրտնուիլը, հողին վրայ կատարեալ սէր չունենալը, պան-

դիտութիւնը շահու գլխաւոր աղբիւր մը նկատելը, վաշխառուներէն պարտք վերցնելը, եւ այլն, բոլոր ասոնք մեր գիւղացիներուն աննախանձելի եւ թշուառ վիճակ մը ունենալնուն պատճառներ են :

Եթէ հողային սեփականութիւնը՝ գիւղացիին հողատէր ըլլալը կարեւոր առաւելութիւններ կ'ընծայէ, պէտք չէ ծածկել նաեւ, որ գիւղացիին տգիտութիւնը ընդհանրապէս օգտակար գործադրութիւնները կը խափանէ եւ անժխտելի բարիքները չհասկնալու կը դատապարտէ :

Մեր սեփական հողի տէր գիւղացիները ի՞նչպէս կը վայելեն անոր քարիքները. . . — Եսասիրութեամբ եւ ունակապաշտութեամբ, այսինքն պապէն տեսածէն չհեռանալով. . . — Իր շահուն դերի, որուն լաւագոյն մղիչը դեռ իր քրտինքն է. իր կի՛նը աշխատութեան գործիք մը եւ իր զաւակները արտագրիչ մեքենաներ կը նկատէ: Եթէ արտագրուած բերքը իր պէտքերէն աւելի ըլլայ, եւ կամ որ եւ է միջոցով մը ձեռքը քիչ մը դրամ անցնի, կամ բոլորովին աւելորդ եւ ցուցամոլ բաներու կը մտխէ եւ կամ նոր հող մըն ալ գնելու. կ'աճապարէ, վայրկեան մը իսկ չխորհելով արտագրութեան միջոցները բարեփոխելու եւ արդիւնաբերելու եղանակներուն եւ կերպերուն վրայ չհողատիրութեան այս սէրը եւ ցուցամոլութիւնը գոհացնելու համար յաճախ պարտք ալ կ'ընէ :

Պարտքը վճարելու համար իր առողջութեանը եւ պշխատութեանը վրայ յոյս կը դնէ, մինչդեռ իր անհոգութիւնը առաջինը պահպանելու անփոյթ կ'ընէ, եւ իր տգիտութիւնն ալ երկրորդը տաժանելի կը դարձնէ: Իր եւ ուրիշներուն շահը ինչ որ ալ պահանջէ, միեւնոյն մտածումն է որ զինքը կ'առաջնորդէ, ցուցամոլութիւնն: Վայելելու սովորութիւնը զինքը յաճախ մտխոզ կը դարձնէ, իսկ շահող գիւղացիին ագահ կ'ըլլայ :

Տաճկաստանի մէջ կառավարութեան կողմէ տաս տասներկու տարի առաջ երկրագործական արևնիս մը հաստատուած է, երկրագործ գասակարգին թեթեւ սովորով փոխատութիւններ ընելով, տղրուկի նման գիւղացիներուն արիւնը ծծող վաշխառուներու չորհատակութեանց վերջ մը տալու համար :

Սակայն գիւղացի ագէտ ժողովուրդը փոխանակ օգտուելու այդ շատ գովելի հաստատութիւնէն. ընդհակառակը

իր տգիտութեան եւ անհոգութեան պատճառով միշտ սու-
ժեւու վրայ է :

Որովհետեւ, տգէտ գիւղացին պայմանաժամին իր
պարտքը վճարելու անփոյթ գտնուելով, ըստ օրինի իր
գրաւ գրած հողը՝ իր միակ յոյսն ու ապաւէնը՝ պանֆայի
կողմէ հրապարակային աճուրդի գրուելով կը վաճառուի,
եւ այսպէս կը զրկուի իր ապրուստի միակ միջոցէն :

Երկրագործական պանֆայէն պարտք վերցնողներուն
կէսէն աւելին այսպէս կորսնցուցած են իրենց հողերը :

Ճիշդ է, որ վաշխատուները մեծաքանակ տոկոսներ
առնելով, երկրագործին թշուառութեանը պատճառ կը
դառնան, սակայն այս վերջինները իրենց հողէն չեն
զրկուիր, միայն քիչ մը աւելի կ'աշխատին տոկոսը եւ
պարտքը վճարելու համար, վերջապէս անհող չեն գտնուիր
այդ մասին : Բայց խնդիրը երբ գայ Երկրագործական պան-
ֆային, բոլորովին անհող կը մնան եւ այդ անհոգութիւնը
իրենց աւելի սուղ կը նստի քան թէ վաշխատուին մե-
ծաքանակ տոկոսը . . . :

Տօք. 4. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԻ ԽՐԱՏՆԵՐԸ

Ո Չ Խ Ա Ր Ի Ք Ո Ս Ը

Այս հիւանդութիւնը այնքան ընդհանրացած եւ ծանօթ
է անասնաբուժերու եւ մինչեւ իսկ գիւղացիներու, որ աւել
լորդ պիտի ըլլար անոր ախտանիշերուն վրայ ծանրանալ :

Քոսին հետքը ջնջելու համար զուարին մէջէն, ամենէն
գործնական եւ ուժեղ միջոցն է, հիւանդները լողցնել հե-
տեւեալ դեղաձեւով պատրաստուած ջուրի մէջ .

Չառիկային թթու (acide arsénieux)	1	քիւօ
Չէնկի ծծմբատ (առեւտուրի) (sulfate de zinc) ..	5	»
Հասարակ հալուէ (aloès)	500	կրամ
Հասարակ ջուր	100	լիդր

Չառիկային թթուն լուծեցէք 20 լիդր տաք ջուրի մէջ, զէնկի ծծմբատը եւ հալուէն ալ 10 լիդր պաղ ջուրի մէջ. երկուքը իրար խառնեցէք եւ աւելցուցէք խառնուրդին վրայ 100 լիդր ջուրը:

Եթէ քոսի կեղեւները կարծր եւ կպչուն են, նախ պէտք է լոգցնել զաղջ անառոտ ջրով, որ կը պատրաստուի 100 լիդր ջուրի մէջ 2 քիլօ կանանչ սապոն գնելով, այս լոգանքով կեղեւները կը փախին, եթէ վրձինով մ'ալ չփուին կը մաքրուի մարմինը: Այս խնամքը տանելէն ութ օր վերջը միայն պէտք է գեղաջուրին մէջ թաթխել:

Առնուազն 100 լիդր ջուր պարունակող տաշտի մը մէջ պէտք է լեցնել 50-60 լիդր գեղաջուրէն. ոչխարները կը քըշուին սեղ մը, ուրկէ մէկ մէկ հանուելով կը լոգցուին, չորս մարդ պէտք են. մէկը կը բերէ ոչխարը, երեքն ալ կը լոգցնեն: Առաջին մարդը կը բռնէ ոչխարի առջի ոտքերէն, երկրորդը ետքիններէն, երրորդն ալ գլխէն. ոչխարը կը պռկեցուի կռնակին վրայ, գլուխը դուրսը կը ձգուի աչքերը ծածկելով: Այս դրութեան մէջ երկու վայրկեան պահելէ ետքը, կը կայնեցնեն տաշտին մէջ: Երկու հոգի կարծր վրձիններով, մեղմօրէն կը վրձինեն մարմնոյն մասերը, մանաւանդ հիւանդները երկու վայրկեան, ըսել է բոլոր աշխատութիւնը պէտք է կատարուի չորս վայրկեանի մէջ, քանի որ զառիկային թթուն թունաւոր նիւթ մ'է:

Յետոյ, ամբողջ մարմինը ձեռքով կը սեղմեն հեղուկի մնացածը քամելու համար. վերջապէս կենդանին ազատ կը թողուի, ուրիշի մը վրայ կատարելու համար միեւնոյն գործողութիւնները: Այս լոգանքը լաւ արդիւնք կուտայ, բայց աշխատութիւնը քիչ մը երկար է եւ 3-4 մարդու պէտք կայ:

Երբ քոսը շատ տարածուած չէ եւ քիչ է հիւանդներու թիւը. կարելի է գեղել միայն հիւանդ մասը, եւ հովիւը կրնայ ընել ամեն օր. կը գործածուի քրէզլէէի (crésylée) ջուր եւ նոյն իսկ ծխախոտի ջուր:

ԲՕԳ.



ՃԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ

Շ Ե Ր Ա Մ Ը

Մարդոցմէ ոմանք տեսնելով, շատերն ալ գոնէ լսելով
իմացած են որ, շերամը անգին կենդանի մը եւ շահատու
միջատ մ'է :

Արդարեւ դարերէ ի վեր, այս օգտակար որդը խել մը
ժողովուրդներու եւ ազգերու շահուն ու հարստութեանը
աղբիւրն եղած է :

Շերամի ձուն շատ նմանութիւն ունենալով բոյսերու
հունտերուն, ժողովուրդը սխալ առումով հուսն, սերմ եւ
կուս կ'անուանէ :

Այս անունները պէտք չէ տալ շերամի ձուին, քանի
որ իր կազմութեամբ բոլորովին տարբեր է բուսական
հունտերէ եւ կենդանեաց ձուերու յատուկ կազմութիւնը
ունի. այլ պէտք է անուանել շերամկիթ, ինչպէս հաւերու
ձուերուն կ'ըսենք հաւկիթ եւ ձուկերունին ձրկնկիթ :

Շերամկիթերէն՝ գարնան ջերմութեան ազդեցութեան
ներքեւ կամ արուեստական տաքութիւնով, դուրս կ'ելլեն
շատ փոքրիկ որդեր, որոնք հազիւ կէս հազարակրամ
ծանրութիւն ունին :

Պզտիկ շերամները գիրենք պատող շերամկիթի կեղեւէն
դուրս ելածնուն պէս, իբրեւ սովալլուկներ կ'իյնան թը-
թենիի մատղաշ տերեւներուն վրայ, ազահութեամբ եւ
արագաբար կ'ուտեն եւ կամաց կամաց կը մեծնան : Շե-
րամները ծնելէն 5-6 օր վերջը թութի տերեւներուն վրայ
կ'երկննան եւ անշարժ կը պառկին, կարծէք կը քնանան .
անշարժութիւնը 30 ժամ կը տեւէ՝ որուն կ'ըսուի առաջին
հաւակ : Այս ժամանակամիջոցին առաջին մորթին տակ նոր
մը կը կազմուի . նոր եղջիւրային մասեր, կզակներ, աչքի
ծակեր, եւ այլն կը ձեւանան : այս նոր մասերու ծաւալը
աւելի մեծ է եւ կը գրաւէ առաջիններու, հիներու տեղը :

Շերամի ծնած ատենին ունեցած գլուխը կ'իյնայ,
ճակտի վրայի մորթը ուղղահայեաց կը ճեղքի, ուրկէց
շերամը դուրս կ'ելլէ մեծ ճիգեր թափելով : Նախ՝ առջեւի
թաթիկները կ'ազատին, վերջը սուտ ճանկերը, հին շա-

պիկը (մորթը) կ'երթայ կը դեզուի պոչին վրայ օղակի ձեւով. շերամը այս դժուարին աշխատութիւնները կատարելէ վերջը, քանի մը վայրկեան կը հանգստանայ ու նորէն ուտել կը սկսի: Այսպէս յաջորդաբար երկրորդ, երրորդ, չորրորդ փուլերը կը քնանայ եւ իւրաքանչիւր անգամին նոր հասակներէ կ'անցնի մինչեւ որ կը հասնի հինգերորդ հասակին, ուրկէ ետքը շերամը կը հասուննայ եւ իր որդային գոյութեան վերջին օրերուն կը հասնի, երբ ճերմակ խողովի սաթային թափանցկութիւնը կը ստանայ:

Վերոյիշեալ բոլոր երեւոյթները, շերամի տեսակին նայելով, սեղի կ'ունենան 30-40 աւուր մէջ: Շերամը՝ երբ իր կատարելութեանը կը հասնի ի սկզբան ինչ որ կը կշռէր, անկէ մէկ քանի հազար անգամ աւելի ծանր կը կշռէ: Հակառակ շերամի արտակարգ աճումին, անոնց կարող վերածնութեանը եւ հիւսուածքին պարունակութեանը, խնամքով սնուցուած բոլոր շերամները այնքան իրարու հաւասար կ'ըլլան, որ մարդ եթէ աչքը գոցելով երկու անհատներ առնէ, քիչ մը ետքը իրարմէ չի կրնար զանազանել: Բնութեան մէջ անշուշտ այսպէս չպիտի ըլլար, որովհետեւ իրարմէ քիչ մը առաջ եւ ետքը ծնելով եւ զանազան բարեխառնութեանց ենթարկուելով, շերամներու միջեւ հասակներու անհաւասարութիւնը առաջ պիտի գար. անտարակոյս մեծ թւով շերամներ ալ նոյն պայմաններու մէջ չպիտի կրնային կեանքի բոլոր շրջանը բոլորել եւ պիտի մեռնէին: Մինչեւ վերջը պիտի հասնէին եւ ապրէին՝ արտաքին ազդեցութիւններու, ցուրտին ու առաքին դիմադրելու կարող վիճակի մէջ գտնուող անհատները միայն: Հասարակական կեանքը չի նեղեր շերամները: Ապացոյց մ'է, որ այդ պայմանի մէջ ալ շերամները կ'ըլլան գեղեցիկ, հասակով հաւասար, կանոնաւոր եւ աճող. իրաւ է թէ՛ մէկ քանի առողջ որդեր անկողիններու տակ մեռած կը գտնուին, բայց ցոյց չեն տար որ նեղուած են:

Մշակական այս պայմանը (հասարակական կեանքը) երբեմն աղիտաբեր հետեւանքներ կ'ունենայ, երբ միջատի գործարաններուն ո եւ է օտար եւ արտաքին ազդեցութիւններ կը միջամտեն, օրինակի համար երբ հիւանդութիւններ կը ծագին:

Հասուննալով շերամը կը թողու իր անկողինը եւ ո եւ է անկիւն մը կը փնտռէ հիւսելու համար իր բոժոժը

(խողակ), որ ցեղին համեմատ՝ կ'ըլլայ արծաթագոյն, ոսկեգոյն եւ կապուտիկ :

Շերամը իր գոյութիւնը պահպանող պահարանին, այսինքն բոժոժին մէջ երբ մտնէ, կը կծկտի, միօրինակ կոյտի մը կը վերածուի եւ այսպէս կը ձեւանայ հարսնուկը, որուն մարմնոյն մէջ նոր աշխատութիւններ կը սկսին եւ քիթնուկի հիւսուածքները կը կազմուին : Շերամը իր այս նոր ձեւին տակ միայն պաշտօն մը ունի լրացնելիք, այն է իր նմանը արտադրել եւ մեռնիլ :

Էգ թիթեռնիկի ամած շերտակիքերը մեզ կ'առաջնորդեն այն սկզբնակէտին ուրկէ մեկնեցանք :

Մեր այս նկարագրածը շերմաբուծութեան կանոնմատոյր վիճակն է . յաջորդ անգամին պիտի ուսումնասիրենք տնոր անկանոն վիճակը, այսինքն՝ շերամի հիւսուածքիւնները :

[Շարունակելի]

Գ. ՄԵՄԱՏՈՒԲԱՆ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն

Մ Խ Ա Խ Ո Յ

(Շար. նախորդ քիւիկն)

Ուղածու բոյներու կուտկերը շատ նպաստաւոր են, մանաւանդ քիթախոտի (էնֆրիէ) յատկացուած ծխատունկեւրու համար : Քանի մը հեղինակներ ալ խորհուրդ կուտան ծխատունկի յատկացուած արտերու վրայ՝ նախ մշակել երեքնուկ (եօնճա) յիսոյ՝ փոխանակ քաղելու՝ վարել եւ կանանչը՝ իբր պարար խառնել հողին :

Մխածուիկն սննդեան եւ վառուելուն ամենէն անհրաժեշտ նիւթը բողասն է . եթէ իւրաքանչիւր հէկտար տարածութեան վրայ 200-300 քիլօ (sulfate de potasse) սիւլֆատ սր բօքսա կոն (carbonate de potasse) ցանուի, ծխախոտի թէ բերքի քանակը կը բարձրացուի, թէ աղէկ այրիլը կ'ապահովուի :

Վերը ըսինք թէ՛ ծխատունկը ռւզարմատ բոյս մ'է եւ կը սիրէ կակուղ, ոյժով, բերրի եւ կաւ աւազային հողերը ,

ուսումնասիրենք հիմա ալ մշակութեան եղանակը :

ԵԹԷ ՀՈՂԸ ԿՐԱՅԻՆ ԵՒ ԽՈՆԱԻ Է

Առաջին հերկը պէտք է ընել աշունը, առնուազն երեք անգամ հերկելու է, եւ վերջինը գարնան՝ տնկելէն քանի մը օր առաջ, այս աշխատութիւնը ամբողջացնելու է, ցաքանելով եւ լողելով :

Ցաքանելը կը սկսուի փետրվարին եւ կը վերջանայ մարտի ետքերը : Սերմնցուն հաւասարապէս ցանելու համար, որովհետեւ շատ մանր է, պէտք է խառնել աւազի կամ մոխրի : Մէկ կրամ ծխատունկի կուտը կը բաւէ մէկ ու կէս մէթր մակերեւոյթ ունեցող հողի : Տաք երկիրներու մէջ ուղղակի արտին երեսը կը ցանեն, կան տեղեր ալ որ առաջ նասիր կ'ընեն, որպէսզի կարող ըլլան մատաղատունկերը պաշտպանել արեւի կիզիչ ճառագայթներուն, յետամնաց ցուրակրուն, անձրեւներուն եւ վնասակար միջատներուն դէմ :

Մատաղատունկերը կը պաշտպանեն պակեայ փեղկերով, սախտակներով եւ փսիաթներով :

Ցանելէ ետքը, սերմնցուն պէտք է ծածկել ընտիր եւ փոշիացած հողի բարակ խաւով մը եւ բահի մը կոնակովը դուրել :

Միատունկի լաւ կուտը 15-20 օրէն կը ծլի, որուն միայն խնամք տանելու է երեկոյները ջրելով եւ բուսած օտար խոտերը քաղելով :

Մայիսի 15էն վերջը նասիրները կը փոխադրուին արտը տնկուելու : Կան հողագործներ, որ տնկելու համար 7-8 տերեւ ունեցող մատաղատունկերը կը գերադասեն. սխալ մ'է, ընդհակառակը նախամեծարելու է 4-5 տերեւ ունեցողները, որոնք աւելի դիւրութեամբ կը վերարուսնին (կ'առնեն), որովհետեւ այս վերջինները շոգիացմամբ նուազ կը կորսնցնեն, արմատն ալ աւելի ոյժով կը մնայ եւ աւելի աղէկ կը զարգանայ :

(Շարունակելի)

Գ. Մ.

Օ Ձ Ի Խ Ա Յ Թ Ո Ի Ա Մ Ը

Դարման

Օձէն խայթուողը առաջին անգամ խածուած տեղը ցաւեր կ'իմանայ, երբեմն այնքան սաստիկ կ'ըլլայ ցաւը՝ որ կը նուազի մարդը :

Կը պատահի երբեմն որ խածնուած տեղը չի տեսնուիր,

բայց ընդհանրապէս՝ քանի մը կաթիլ արիւն կը գանուի խածնուածքին վրայ:

Շատ չանցած վիրաւոր անդամը կ'ուռի եւ ուռեցքը կրնայ տարածուիլ: այս մասը կը կարմրի, կը կապուտնայ եւ մանիշակի գոյն կը ստանայ:

Յաճախ կը պատահի, որ խածնուածքին շուրջը կ'երեւին պզտիկ փայլուն բշտիկներ. ասոնք տեղական եւ մասնակի երեւոյթներ են:

Ասկէց զատ՝ վիրաւորը ընդհանուր անհանգստութիւն մը կը զգայ, շատ անտանելի տաքնապններ եւ շնչելու դժուարութիւն: Մերթընդմերթ պաղ քրտինք, բազկերակը ընդհատած եւ անկանոն կը զարնէ: Հիւանդներէն ոմանք կը զանգատին թէ պզտոր կը տեսնեն, եւ աչքերնին կը խողորտի, սիրտերնին կը խառնուի եւ կը փսխեն:

Բայց եթէ խնամով եւ ճշգուծեամբ դարմանուին, այս արկածները ծանր չեն եւ կը կորսուին:

Օձի խայթածի ծանրութիւնը, տարիքէ տարիք, բարեխառնութենէ բարեխառնութիւն, ոյժէ ոյժ կը փոխուի: Դարձեալ խայթուածքի մէկ մը կամ մէկէ աւելի ըլլալէն ալ կախում ունի վտանգը: Չափահաս մարդ մը անշուշտ պիտի ազատի խածնուածքէն. բայց հաւանական է, որ պզտիկ տղայ մը մի քանի անգամ եթէ խածնուած ըլլայ մեռնի:

Փորձանքը գալէն վերջը՝ ահաւասիկ լաւագոյն միջոցը՝ որ ամեն տեղ կրնայ գործածուիլ: Անմիջապէս պէտք է վէրքին բերանը բանալ սուր զմեղի մը ծայրով, ծծել վէրքի տեղը եւ յետոյ այրել կրակ կտրած երկաթով կամ ալքոլի եւ աւիս ֆենիֆի խառնուրդով մը, եթէ չգտնուին այս դեղերը՝ անուշադրով (նիշտիր րուհու): Միաժամանակ վէրքին վրայի մասը ոյժով կապել: Ներսէն ալ պէտք է սալ տաք, ոյժով, ալքոլ կամ օղի խառնած ըմպելիքներ, քրտնցնել տալու համար հիւանդը:

Այսպէս խնամելով հաղուադէպ պիտի ըլլան վտանգները:

Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Նապաստակներու կրծելէն պաշտպանել ծառերը. — Մա-
նաւանդ ձմեռ ատեն, նապաստակները մատղաշ ծառերդե-
ներքուի մասի կեղեւը կը կրծեն եւ այդպէս շատ ծառերու

չորնալուն պատճառ կ'ըլլան: Ասոնց տուած փասաներէն ազատելու համար, ծառերու ներքեւի մասին վրայ քսելու է, ծծումբի փոշիով խառնուած ճրագու:

Կծուած կարագի հաւեր փոխել. — Կծուացած կարագը լուանալ լաւ եւ թարմ կաթով, որուն կը խառնուի իր ծաւալին մէկ քառորդն ալ կրաջուր: Կաթնախառն կրաջրով լուալէ վերջը կարագը աղբիւրի պաղ ջրով ալ վերջին անգամ մը լուալ:

Ձիերու խիթին դարման. — Եթէ ճիշդ ժամանակին գործածուի հետեւեալ միջոցը, հազուադէպ է որ ձի մը մեռնի խիթով. կէս լիգր տաք եւ շաքարած ջուրի մէջ 14 կրամ եթեր (ether) գնելով երեք քառորդ ժամու մէջ, մաս առ մաս խմցնելու է հիւանդին:

Եթեր չի գտնուած տեղը, կարելի է տաք ջուր գործածել, թէ ներսէն թէ դուրսէն:

Աղուեսները մեղցնել. — Խլուրդ մը սպաննել, անոր ուղեղին մէկ մասը հանել ու տեղը լեցնել սդրիֆնիկ եւ թունաւորուած խլուրդը դնել աղուէսներու անց ու դարձի ճանապարհին վրայ. հաստատուած է, որ աղուէսները շատ կը սիրեն խլուրդի միսը, մինչդեռ անօթի շունն ու կատուն չեն մօտենար անոր մսին, հետեւաբար երկիւղ մը չի կայ, որ ընտանի կենդանիները թունաւորուին մեռած խլուրդի միսն ուտելով:

Մեղուները կը մեռնի՞ն ցուրտէն. — Մեր մէջ սովորութիւն է, ձմեռը հասնելուն պէս, փեթակներու ծակերը ցեխով ծեփել եւ մեղուանոցներէն իջեցնել վարի տունները, ներքեւի յարկերը, պատսպարելու նպատակով ցուրտէն ու բուքէն. հերթք չէ դեռ այս բանը՝ մթիկներով, չուլերով, հին վերմակներով ալ կը ծածկին:

Պէտք է գիտնալ, որ մեղուները չեն մեռնիր ցուրտէն, կը մեռնին անօթութենէն: Հետեւաբար ձմրան առատ պաշար պէտք է թողուլ փեթակին մէջ՝ 10-12 քիլօ մեղր. փեթակները անձրեւէն, ձիւնէն եւ հովէն պաշտպանուելու են միայն, որպէսզի գուրսի մաքուր օդը ներս մտնէ, մինչեւ անգամ ծակը ծեփելու չէ:

Charrues à Vapeur
Locomotives à Vapeur
Camions à Vapeur
Tomberaux Routières
Rouleaux des routes à vapeur

Շոգեշարժ արօրներ
Պողոսակերու շոգեշարժներ
Շոգեշարժ սայրակներ
Շոգեշարժ ցած սայրակներ
Պողոսակերու շոգեշարժ լողեր

De construction parfaite et d'une solidité à toute épreuve,
sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler & Cie.
MAGDEBOURG

(Allemagne)

Փորձուած տոկունութեամբ եւ ընտիր շէնքով, կը զրկուին ամենաածան գներով Գերմանիոյ Մակտէպուրկի ԺՕՆ ՖՕՎԼԷՐ Ընկերութեան կողմէն:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Թ Ե Ր Թ

Հայ գրականական հետաքրքրական յօդուածներ եւ անաչառ քննադատութիւն — մեր եւ օտար բանասէրներու հայագիտական յօդուածները — Հանդէսի հրատարակութիւնները ընդհանրապէս ինքնագիր են: Նոր բաժին մը գրական թղթակցութիւններու, քննադատականներ, քաղաքական տեսութիւններ: Գրական հարցմանց առանձին յօդուածներով կը պատասխանէ:

Հասցէ՝ à la Rédaction de la Revue Hantesse.
Mechitariste Vienne (Autriche)

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ամէն ամիս կուտայ առաջնորդող, մատենագրական, աշխարհագրական, պատմական, կենսագրական եւ քաղաքական յօդուածներ:

Հանդէս հանդիսիցով կը ներկայացնէ իր ընթերցողներու հայ թերթերու մէջ երևցած նշանակութեան արժանի յօդուածներու բովանդակութիւնը:

Գեղարուեստական Գեղարձիկն ալ նուէր կուտայ իր բաժանորդներուն:

Տարեկան բաժնեդիրն է ամբողջ աշխարհի համար 10 ֆրանք. գիմել Rédaction de la Revue Pazmaveb
Venise. S^t Lazare (Italie)

Պ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Գեղարձիկն իր առաջիկայի թերթը նուիրած է անմահ Նահապետին՝ Հ. Ալիշանի: Պրակը առանձին չի վաճառուիր:

Գեղարձիկն երկու ամիսը անգամ մը կը հրատարակուի տարեկան բաժնեդիրն է 3 ֆրանք. գիմել «Բազմավէպ»ի խմբագրութեան: